ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 մարտի 2024 թվականի N 313 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 275-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1.3-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 275-Ն որոշման նախաբանը «24-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «1.3-րդ մասը և» բառերով, իսկ N 1 հավելվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.3-րդ կետով՝

«4.3. Եթե նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինը, ապա դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող ծնողը կամ նրա՝ օտարերկրյա պետությունում գտնվող ամուսինը կամ Հայաստանի Հանրապե-

տության քաղաքացի հանդիսացող՝ դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում աշխատող անձը նպաստի համար կարող է դիմել նաև դիվանագիտական ծառայության մարմնի միջոցով: Այս դեպքում սույն կարգի 3-րդ կետում նշված դիմումը և կից փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինը ծառայություն է ուղարկում իր պաշտոնական փոստից՝ դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով հաստատված գրությամբ կամ դրա՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գրությամբ ելքագրված վերընթերցված (սկանավորած) տարբերակը:».

2) 18-րդ կետի 1-ին ենթակետից հանել «կամ օտարերկրյա քաղաքացի ծնողը բնակչության պետական ռեգիստրում երեխայի ծննդյան օրվա դրությամբ երեք տարի անընդմեջ հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով» բառերը.

3) 18-րդ կետի 1-ին ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով՝

«1.1) օտարերկրյա քաղաքացի ծնողը բնակչության պետական ռեգիստրում երեխայի ծննդյան օրվա դրությամբ երեք տարի անընդմեջ հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, ծնողը և նոր ծնված երեխան դիմելու օրվա դրությամբ չեն գտնվում Հայաստանի Հանրապետությունում, չի ներկայացվել օտարերկրյա պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ նշանակված չլինելու վերաբերյալ տեղեկանք.».

4) 20-րդ կետը «դեպքում» բառից հետո լրացնել «(բացառությամբ այն դեպքի, երբ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի կապակցությամբ նպաստը նշանակվել է խնամակալին)» բառերով.

5) 25-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 25.1-ին կետով.

«25.1. Եթե ծնողը դիմումը ներկայացնում է դիվանագիտական ծառայության մարմնի միջոցով, ապա նպաստի գումարը վճարվում է բացառապես ծնողի բանկային հաշվին փոխանցելու եղանակով՝ բացառությամբ այն դեպքի, երբ դիմումին կից ներկայացվել է ծնողի տված՝ նպաստը այլ անձի վճարելու վերաբերյալ նոտարի կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարի վավերացրած լիազորագիր: Այս դեպքում նպաստը վճարվում է նաև լիազորված անձի բանկային հաշվին փոխանցվելու միջոցով:».

6) 34-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

7) 40-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը «երեխայի» բառից առաջ լրացնել «նպաստը նշանակելուց հետո» բառերով,

բ. 3-րդ ենթակետը «կարգավիճակ» բառից հետո լրացնել «, բացառությամբ, երբ նպաստը նշանակվելու է խնամակալին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ